

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
13 փետրվարի 2013 թ.
Պետական գրանցման թիվ 12413049

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՃՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՐԱՄԱՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԶԵՂՉԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԿՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԸ
ԵՎ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

11 հունվարի 2013 թ.
ք. Երևան N 10-Ն

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան`

Հրամայում եմ`

1. Հաստատել հրապարակային պայմանագրով նախատեսված առևտրային զեղչերի կիրառման վերաբերյալ հարկային մարմին ներկայացվող հայտարարության ձևը և դրա լրացման կարգը` համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ հայտարարությունը թղթային տարբերակով առձեռն ներկայացվելու դեպքում լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչություն: Հարկային տեսչության կողմից հայտարարությունը հաշվառելուց (գրանցելուց) հետո մեկ օրինակը վերադարձվում է հարկ վճարողին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագահ`

Գ. Խաչատրյան

(լրացվում է հարկային տեսչության անվանումը)
 Փաստաթղթի համարը՝ _____
 (լրացվում է հարկային տեսչության կողմից)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՁԵՂՉԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԵՐԱՔԵՐՅԱԼ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

_____ (արկ վճարողի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը) ՀՎՀՀ

Կիրառում է հրապարակային զեղչեր՝

N	1. Ապրանքի (ապրանքախմբի, տեսականու) անվանումը կամ նկարագրությունը	2. Ձեղչի չափը (% կամ զեղչի նկարագրություն)	3. Ձեղչի կիրառման սկիզբը				4. Ձեղչի կիրառման ավարտը				
			օր	ամիս	տարեթիվ	օր	ամիս	տարեթիվ			

Կազմակերպության տնօրեն (անհատ ձեռնարկատեր) _____
 ստորագրությունը, անունը, ազգանունը

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՁԵՂՉԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԵՐԱՔԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Հրապարակային պայմանագրով նախատեսված առևտրային զեղչերի կիրառման վերաբերյալ հարկային մարմին ներկայացվող հայտարարության ձևի (այսուհետ՝ հայտարարություն) 1-ին կետում լրացվում է ապրանքի (ապրանքախմբի, տեսականու) անվանումը կամ նկարագրությունն այնպես, որ հնարավոր լինի որոշել (նույնականացնել) այն ապրանքները, որոնց նկատմամբ կիրառվում է զեղչ:
2. Հայտարարության 2-րդ կետում լրացվում է զեղչի չափը՝ արտահայտված տոկոսներով կամ զեղչի նկարագրությունը:
3. Հայտարարության 3-րդ կետում լրացվում է զեղչի կիրառման ժամանակահատվածի սկիզբը՝ օրը, ամիսը, տարեթիվը:
4. Հայտարարության 4-րդ կետում լրացվում է զեղչի կիրառման ժամանակահատվածի ավարտը՝ օրը, ամիսը, տարեթիվը:
5. Հայտարարությունում նշած ժամկետի ավարտից հետո զեղչի կիրառումը շարունակելու դեպքում՝ վերջնաժամկետի օրվանից 2 աշխատանքային օր առաջ ներկայացվում է նոր հայտարարություն: